Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
մարտի 27-ի N 442 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2014-2025 ԹԹ. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(Ջրային տնտեսության մասով)

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1.1. ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ

1.1.1. ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

1. ԿԶԾ-ով խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի հետագա բարեփոխումները նպատակ են հետապնդել բարձրացնել այդ համակարգերի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը:

2. ԿԶԾ իրականացման ժամանակահատվածում բարելավվել է կենտրոնացված ջրամատակարարման հասանելիությունը՝ հատկապես գյուղական բնակավայրերում: Այսպես, Աղյուսակ 1-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ կենտրոնացված ջրամատակարարման հասանելիությունը գյուղական բնակավայրերում, 2008 թվականի համեմատ, բարելավվել է 1,3 տոկոսային կետով՝ 2011 թվականին հասնելով 93,7 տոկոսի:

3. 2011 թվականի դրությամբ լուծվել է բերովի ջրից օգտվող տնային տնտեսությունների խնդիրը: Այսպես, եթե 2008 թվականին բերովի ջրից օգտվում էր տնային տնտեսությունների 1,1 տոկոսը, ապա 2011 թվականի տվյալներով այդպիսի տնային տնտեսությունների մասնաբաժինը հասել է 0-ի:

Աղյուսակ 1. **Խմելու ջրի մատչելիությունը 2008-2011 թթ., տոկոս**

Ջրի հիմնական աղբյուրը	Ընդամենը հանրապետությունում				Քաղաքային բնակավայրերում				Գյուղական բնակավայրերում			
	2008	2009	2010	2011	2008	2009	2010	2011	2008	2009	2010	2011
Կենտրոնացված ջրամատակարարում	97.0	97.5	97.5	97.5	99.4	99.6	99.5	99.5	92.4	93.6	93.5	93.7
մինչև 1 ժամ	0.7	0.4	0.5	0.1	0.2	0.2	0.3	0.1	1.9	1.0	0.9	0.1
1-5 ժամ	31.3	30.0	26.6	18.6	31.2	26.8	23.7	16.4	31.4	36.5	32.4	23.3
6-12 ժամ	28.7	17.5	20.1	22.6	32.5	19.3	22.5	24.0	20.5	13.8	15.2	19.6
13-23 ժամ	5.7	3.8	4.3	5.5	5.9	4.9	3.9	5.3	5.3	1.4	5.2	5.8
24 ժամ	33.6	48.3	48.5	53.2	30.2	48.8	49.6	54.2	40.9	47.3	46.3	51.2
Ջրհոր, աղբյուր	1.2	1.6	1.4	1.3	0.1	0.2	0.2	0.1	3.2	4.3	3.6	3.6
Ջրամատակարարման սեփական համակարգ	0.6	0.5	1.0	1.1	0.2	0.2	0.3	0.4	1.2	1.3	2.5	2.6
Բերովի ջուր	1.1	0.3	0.1	0.0	0.2	0.0	0.0	0.0	3.0	0.6	0.4	0.0
Այլ աղբյուրներ	0.1	0.1	-	0.1	0.1	0.0	-	0.0	0.2	0.2	-	0.1

Աղբյուրը՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (ՏՏԿԱՀ) 2008, 2009, 2010 և 2011 թթ.:

4. Հետազոտության արդյունքների համաձայն՝ 2011 թվականին ջրամատակարարման միջին օրական տևողությունը 2008 թվականի համեմատ բարելավվել է շուրջ 3,6 ժամով՝ կազմելով 16 ժամ և հասել է ԿԶԾ-ով 2012 թ. համար սահմանված նպատակադրմանը:

5. Միաժամանակ, ջրամատակարարման տևողությունը ներկայումս ևս շարունակում է բնութագրվել տարածքային անհամաչափություններով: Այսպես, Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի կողմից սպասարկվող 36 քաղաքներից 9-ում ջրամատակարարման միջին օրական

տևողությունը 2012 թվականին ցածր է եղել 12 ժամից: Ջրամատակարարման միջին օրական տևողությունը, 2012 թվականի դրությամբ ըստ քաղաքների ներկայացված է Գծանկար 10-ում:

6. Ջրամատակարարման միջին օրական տևողությունը գյուղական բնակավայրերում ևս բնութագրվում է զգալի անհամաչափություններով: Այսպես, Հայջրմուղկոյուղի ՓԲԸ-ի կողմից սպասարկվող գյուղական բնակավայրերում 2012 թվականին ջրամատակարարման միջին օրական տևողությունը կազմել է 14.6 ժամ, մինչդեռ, ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, գյուղական բնակչության շուրջ 1/4-ի համար ջրամատակարարման միջին օրական տևողությունը 5 ժամ և պակաս է եղել:

Գծանկար 1. Ջրամատակարարման միջին օրական տևողությունը ՀՀ քաղաքներում 2012թ.



Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե:

1.1.2. ԾՐԱԳՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Ծրագրով նախատեսվում է շարունակել խմելու ջրի համակարգերի բարեփոխումները՝ նպատակ ունենալով բարձրացնելու համակարգերի շահագործման հուսալիությունն ու արդյունավետությունը և բարելավելու ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը՝ ուշադրության կենտրոնում պահելով տարածքային անհամաչափությունների մեղմման խնդիրը:

8. **Ներդրումային քաղաքականություն:** Խմելու ջրի համակարգը կշարունակի մնալ պետական ներդրումային գերակայությունների շարքում: Ծրագրի ողջ ժամանակահատվածի համար համակարգում տարեկան ներդրումների մակարդակը կկազմի ՀՆԱ-ի 0.4%-ը:

9. Ներդրումային քաղաքականության թիրախ կհանդիսանա մատուցվող ծառայությունների տևողության[1] ու որակի բարձրացումը և առկա տարածքային անհամաչափությունների մեղմումը: Ներդրումային քաղաքականությունը նաև նպատակաուղղված կլինի խմելու ջրի համակարգերի արդյունավետության բարձրացմանը՝ ուշադրության կենտրոնում պահելով, հատկապես, ջրի կորուստների նվազեցման խնդիրը: Ջրահեռացման բնագավառում կարևորվում է նաև քաղաքների ու խոշոր բնակավայրերի կոյուղացման համակարգի վերակառուցումը և հեռացվող կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումը:

10. Ներդրումային քաղաքականության շրջանակներում առանձին մոտեցում կցուցաբերվի նաև այն շուրջ 560 գյուղական համայնքների նկատմամբ, որտեղ ներկայումս ջրամատակարարումը և ջրահեռացումը չի իրականացվում ջրամատակարարման ծառայությունների մատուցման թույլտվություն ունեցող մասնագիտացված կառույցների կողմից: Կառավարության ներդրումային ծրագրերում այդ համայնքների ընդգրկումը կպայմանավորվի ջրամատակարարման ծառայությունների մատուցման թույլտվություն ունեցող գործող կամ նոր ձևավորվելիք մասնագիտացված կառույցների սպասարկման տարածքներում դրանց ներառմամբ: Միաժամանակ չեն անտեսվի նաև այն համայնքների ջրամատակարարման խնդիրները, որոնց ընդգրկումը ջրամատակարարման ծառայություններ մատուցող մասնագիտացված կառույցների սպասարկման տարածքներում տեխնիկապես դժվար իրագործելի կամ տնտեսապես ոչ շահավետ կլինի:

11. **Սակագնային քաղաքականություն:** Սակագնային քաղաքականությունը ծրագրի ժամանակահատվածում ուղղված կլինի սակագների ծախսածածկման մակարդակի աստիճանական բարձրացմանը՝ հաշվի առնելով ամենացածր եկամտային խմբի տնային տնտեսությունների համար մատչելիության հանգամանքը: Կսահմանվի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատչելի սակագնի առավելագույն շեմ[2], որից բարձր սակագնով ծառայությունների մատուցումը աղքատ ընտանիքների համար առաջացած տարբերության չափով կսուբսիդավորվի պետության կողմից:

12. **Կառավարման բարեփոխումներ:** Շարունակվելու են խմելու ջրի բնագավառում իրականացվող կառավարման բարեփոխումները՝ բարձրացնելով մասնավոր հատվածի մասնակցության աստիճանը: Կառավարությունը կխրախուսի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման թույլտվություն ունեցող մասնագիտացված կառույցների սպասարկման տարածքների ընդլայնումը, ինչպես նաև գործող մասնագիտացված կառույցների սպասարկման տարածքներից դուրս մնացած գյուղական համայնքներում ջրամատակարարման ծառայություններ մատուցող նոր մասնագիտացված կառույցների ձևավորումը: Այդ նպատակով կիրականացվի երկրի ջրամատակարարման համակարգի, այդ թվում՝ չսպասարկվող գյուղական բնակավայրերի ամբողջական գնահատում:

---

[1] Նախնական գնահատականներով՝ ներդրումների առաջարկվող մակարդակը թույլ կտա ջրամատակարարման շարունակականության միջին հանրապետական ցուցանիշը տարեկան բարձրացնել 0.5 ժամով:

[2] Բնակչության ամենաաղքատ քվինտիլային խմբի սպառողական ծախսերի նկատմամբ՝ 2.5 տոկոս: Հաշվարկային սպառման ծավալը մեկ շնչին՝ օրական 70 լիտր: 2010 թ. գնահատականներով՝ մատչելի հաշվարկային սակագինը կազմել է 190 դրամ /մ^3:

1.1.3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

13. Խմելու ջրի համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Խմելու ջրի համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները

Ցուցանիշ	Բազային տարի	2014	2017	2021	2025
Բարեփոխումների ինդեքս (ՎԶԵԲ-ի կողմից հրապարակվող ցուցանիշ, Transition Indicator)	2.67 (2013)	3.0	3.67	4.0	4.33
Ջրամատակարարման շարունակականության ցուցանիշի բարելավում բազային տարվա նկատմամբ, ժամ/օր					
“Երևան Ջուր” ՓԲԸ-ի սպասարկման տարածք (ներառում է Երևան քաղաքը և հարակից 32 գյուղական բնակավայրերը)	23.0 (2012)	0.2	0.5	0.8	1.0
“Շիրակ-ջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի սպասարկման տարածք (ներառում է Գյումրի քաղաքը և հարակից 36 գյուղական բնակավայրերը)	13.7 (2012)	1.0	2.5	4.5	6.3
“Լոռի-ջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի սպասարկման տարածք (ներառում է Վանաձոր քաղաքը և հարակից 16 գյուղական բնակավայրերը)	12.1 (2012)	1.5	3.0	5.5	7.9
“Նոր Ակունք” ՓԲԸ-ի սպասարկման տարածք (ներառում է Արմավիր քաղաքը և հարակից 10 գյուղական բնակավայրերը)	22.4 (2012)	0.2	0.5	0.8	1.0
“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի սպասարկման տարածք, այդ թվում՝ ըստ քաղաքների խմբի[3] և գյուղական բնակավայրերի	16.2 (2012)	0.9	2.2	3.4	4.5
Քաղաքների խումբ 1	22.6 (2012)	0.2	0.5	0.8	1.0
Քաղաքների խումբ 2	16.1 (2012)	0.8	2.0	3.0	3.9
Քաղաքների խումբ 3	12.1 (2012)	1.6	4.0	6.0	7.9
Գյուղական բնակավայրեր	14.6 (2012)	1.0	2.5	4.0	5.4
Պետական ներդրումների մակարդակ, տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ	0.37 (2012)	0.4	0.4	0.4	0.4

1.2. ՈՌՈԳՈՒՄ

1.2.1. ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

14. Վերջին տարիների ընթացքում ոռոգելի հողատարածքների ընդլայնումը բավականին դանդաղ տեմպերով է ընթացել: Մասնավորապես, 2008թ. համեմատ ոռոգելի հողատարածքները 2012թ. ավելացել են ընդամենը 1 տոկոսով և կազմել 130.7 հազար հա:

Աղյուսակ 3. Ոռոգելի հողատարածքները և մատակարարված ջրի ծավալը 2008-2012 թթ.

	2008	2009	2010	2011	2012
ՋՕԸ-ների կողմից սպասարկվող ոռոգելի հողատարածքներ, հազ. հա	128.9	128.1	128.8	129.4	130.7
Մատակարարված ջրի ծավալ, մլն խ.մ.	576.7	412	396.5	415.3	472.1
Ջրի տեսակարար ծախսը, հազ. խ.մ./հա	4.47	3.22	3.08	3.21	3.61

Աղբյուրը՝ Ջրային տնտեսության պետական կոմիտե

15. Վերջին ժամանակահատվածում նվազել է ջրի տեսակարար ծախսը մեկ հեկտարի հաշ-

[3] Առաջին խմբում ընդգրկված են այն քաղաքները, որտեղ ջրամատակարարման միջին օրական տևողությունը բազային տարում բարձր է եղել 20 ժամից, երկրորդ խմբում՝ այն քաղաքները, որտեղ ջրամատակարարման միջին օրական տևողությունը բազային տարում եղել 10-20 ժամի միջակայքում, իսկ 3-րդ խմբում՝ այն քաղաքները, որտեղ ջրամատակարարման միջին օրական տևողությունը բազային տարում ցածր է եղել 10 ժամից:

վով՝ 2008 թվականին կազմելով 4.47 հազ. խ.մ.: 2012 թվականին այն շուրջ 19 տոկոսով նվազել է մինչև 3.61 հազ.խ.մ.: Ջրի տեսակարար ծախսի նվազումը հիմնականում պայմանավորված է եղել բնակլիմայական պայմանների փոփոխությամբ և ոռոգման առաջնային ցանցում ջրի կորուստների նվազմամբ:

16. Միևնույն ժամանակ, վերջին տարիներին դրական տեղաշարժեր են արձանագրվել ոռոգման ջրի մատակարարման ծառայություններից ջրօգտագործողների բավարարվածության աստիճանը բնութագրող ցուցանիշների վարքագծում: Մասնավորապես, 2009-2011 թթ. շուրջ 1400 ջրօգտագործողների ներկայացուցչական ընտրանքային հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ոռոգման ջրի մատակարարմամբ ջրօգտագործող տնային տնտեսությունների բավարարվածության համաթվի արժեքը 2011թ. հավասար է եղել 50-ի՝ 2009թ. արձանագրված 40-ի փոխարեն (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Ոռոգման ջրի մատակարարման ծառայություններից բավարարվածությունը 2009-2011 թթ.

	2009	2011
Այն ջրօգտագործող տ/տ-երի տեսակարար կշիռը, որոնց գնահատմամբ՝ իրենք սեզոնի ընթացքում ոռոգման ջուրը ստացել են հարկ եղած ժամանակ, %՝ ջրօգտագործող գյուղական տ/տ-երի ընդհանուր թվում	57.2	70.8
Այն ջրօգտագործող տ/տ-երի տեսակարար կշիռը, որոնց գնահատմամբ՝ իրենք սեզոնի ընթացքում ոռոգման ջուրը ստացել են անհրաժեշտ քանակությամբ, %՝ ջրօգտագործող գյուղական տ/տ-երի ընդհանուր թվում	60.9	72.8
Այն ջրօգտագործող տ/տ-երի տեսակարար կշիռը, որոնց գնահատմամբ՝ նախորդ տարվա համեմատ ոռոգման ջրի մատակարարումը բարելավվել է, %՝ ջրօգտագործող գյուղական տ/տ-երի ընդհանուր թվում	17.0	12.2
Այն ջրօգտագործող տ/տ-երի տեսակարար կշիռը, որոնց գնահատմամբ՝ իրենց գյուղի ոռոգման համակարգը "շատ լավը" կամ "լավն" է, %՝ ջրօգտագործող գյուղական տ/տ-երի ընդհանուր թվում	23.5	35.7
Ոռոգման ջրի մատակարարմամբ ջրօգտագործող տ/տ-երի բավարարվածության համաթիվ (ISI)	**39.7**	**47.9**

Աղբյուրը՝ ՋՕԸ-ների անդամ տնային տնտեսությունների 2009 և 2011 թթ. հետազոտության արդյունքներ («ՀՄՀ Հայաստան» ՊՈԱԿ/ «ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊԸ):

1.2.2. ԾՐԱԳՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. **Ներդրումային քաղաքականություն:** Ոռոգման համակարգը ևս կշարունակի մնալ պետական ներդրումային գերակայությունների շարքում: Ծրագրի ողջ ժամանակահատվածի համար համակարգում տարեկան կապիտալ ներդրումների մակարդակը կկազմի ՀՆԱ-ի 0.3%-ը: Միևնույն ժամանակ, Կառավարությունը քայլեր է ձեռնարկելու ոռոգման համակարգերի շահագործման և պահպանման ծախսերի պատշաճ մակարդակ ապահովելու ուղղությամբ:

18. Ներդրումային քաղաքականության թիրախ կհանդիսանա ոռոգելի հողատարածքների ընդլայնումը և համակարգի արդյունավետության բարձրացումը: Ոռոգելի հողատարածքների ընդլայնմանը ենթադրվում է հասնել ոռոգման գործող համակարգերի շրջանակներում:

19. **Սակագնային և սուբսիդավորման քաղաքականություն:** Սակագնային քաղաքա-

կանությունը ուղղված է լինելու սակագների ընթացիկ ծախսածածկման մակարդակի աստիճանական բարձրացմանը:

20. ՋՕԸ-երի ֆինանսական աջակցության տրամադրումը կիրականացվի ՋՕԸ-երին ընթացիկ դրամաշնորհների տեսքով պետական ֆինանսական աջակցության տրամադրման կանոնակարգին համապատասխան[4]:

21. **Կառավարման բարեփոխումներ:** Շարունակվելու են ոռոգման համակարգի կառավարման բարեփոխումները, որոնք ուղղված են լինելու ձևավորված մասնակցային կառավարման խորացմանը:

1.2.3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

22. Ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները

Ցուցանիշ	Բազային տարի	2017	2021	2025
Բարեփոխումների ինդեքս (ՎԶԵԲ-ի կողմից հրապարակվող ցուցանիշ. Transition Indicator)	2.67 (2013)	3.67	4.0	4.33
ՋՕԸ-ների կողմից սպասարկվող ոռոգելի հողատարածքներ, հազ. հա	130 (2012)	132.4	135	138
Պետական կապիտալ ներդրումների մակարդակ, %՝ ՀՆԱ նկատմամբ	0.18 (2012)	0.3	0.3	0.3
Սակագնի ընթացիկ ծախսածածկման (հաշվեգրային) մակարդակ, %	46 (2012)	100	120	120

[4] «2012-2016թթ. ջրօգտագործողների ընկերություններին ընթացիկ դրամաշնորհների տեսքով պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» ՀՀ Կառավարության 2011 թվականի մարտի 10-ի թիվ 398-Ն որոշում: